



Կարգապահական գործ թիվ ԿԳ-18139

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի փետրվարի 06-ի թիվ 1-ին ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/01-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ԳՐԵՏԱ ՌԱՄԱԶՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Գրետա Ռամազյանին (արտոնագիր թիվ 370)

(**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Քաղաքացի Նորիկ Խանվելյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**), դիմելով Պալատ հայտնել է, որ 2016թ. հուլիսի 28-ին կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր փաստաբան Գրետա Ռամազյանի հետ և վճարել 103.000 (մեկ հարյուր երեք հազար) ՀՀ դրամ:

Նորիկ Խանվելյանը միաժամանակ նշել է, որ Գրետա Ռամազյանը մի քանի ամիս խաբել է իրեն, իսկ հիմա էլ չի պատասխանում Դիմողին և դատարան հայց չի ներկայացնում:

Դիմումին կից ներկայացվել է 28.07.2016թ. Դիմողի և Պատասխանողի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 24.09.2018թ. թիվ 355-Ա/ԿԳ-18139 որոշմամբ փաստաբան Գրետա Ռամազյանի (արտոնագիր թիվ 370) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի

պահանջների խախտման հատկանիշներով:

01.10.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Գոհար Հովհաննիսյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Բացատրությամբ Դիմողը ըստ էության հայտնել է, որ հարևանի հետ ունեցած հողային վեճը լուծելու նպատակով 28.07.2016 թվականին այմանագիր է կնքել փաստաբան Գրետա Ռամազյանի հետ և վճարել 103.000 (մեկ հարյուր երեք հազար) ՀՀ դրամ, սակայն վերջինս ձգձգել է գործը՝ անհարկի պատճառաբանություններ բերելով: Իրենց վերջին հանդիպման ժամանակ, օգտվելով իր տարիքից և օրենքներից ոչ բավարար չափով տեղյակ լինելուց, իրեն է տրամադրել փաստաթուղթ ստորագրելու համար: Հետո պարզել է, որ փաստաթղթում նշված է եղել, որ այդ գումարը, նա վերցրել է իրավաբանական խորհուրդ տալու համար, այն ինչ պայմանագրում հստակ նշված է, թե ինչ ծառայությանների համար է վճարվել, որոնք ընդհանրապես չի կատարվել: Վերջին մի քանի ամսվա ընթացքում իր հեռախոսազանգերին չի պատասխանել: Ստացվում է, որ օգտվելով իր մեծահասակ լինելուց և այն հանգամանքից, որ պայմանագիրը կնքելու և գործն սկսելու ժամանակ նրա առջև նստած է եղել միայնակ կին, ում կողքին չի եղել իր երեխաներից կամ թոռներից որևէ մեկը, օգտվել է այդ հանգամանքից և յուրացրել է իր վճարած գումարը՝ դրա դիմաց ոչինչ չանելով:

Խորհրդի նիստին ներկայացել է Դիմողը և իր ներկայացուցիչ Նարեկ Խանվելյանը: Վերջինս հայտնել է, որ փաստաբան Գրետա Ռամազյանի հետ պայմանագիրը կնքել են 2016 թվականին, սակայն վերջինիս կողմից հայցադիմումը ներկայացվել է 2018 թվականի վերջին, իսկ ինչ վերաբերում է կադաստրային հարցումներին, ապա այդ մասին տեղեկացել են փաստաբան Գրետա Ռամազյանից:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Բացատրությամբ Պատասխանողը հայտնել է, որ ինքն իսկապես զբաղվել է Դիմողի գործով և այն ձգձգվել է, սակայն ոչ այն պատճառով ինչ նշված է Դիմումում: Վերջինս հայտնել է, որ Դիմողը ցանկացել է իրեն հեղինակազրկել դրանով իսկ ջուր լցնելով ոստիկանության պետի և տեղակալ «ջաղացին», քանի որ Դիմողը շատ ակտիվ աշխատում և համագործակցում է ոստիկանության հետ, քանի որ մինչ պալատում դիմումի քննարկվելը ոստիկանության պետի տեղակալ Ա. Տիտանյանը, իրեն զանգել և սպառնալով ասել է, որ եթե ինքը որպես փաստաբան որոշ նախաքննական գործերով միջամտի, ապա՝ տիկին Նորիկ Խանվելյանին կասի, որ իր դեմ բողոքի: Իր նկատմամբ նաև նյութեր էր կազմվել, բայց ելնելով գործի հանցամանքներից իրենք իրենց նյութերը մերժել են, իսկ այդ նույն ժամանակ Խանվելյանը գնացել է իր աշխատասենյակ՝ լայն ժպիտով և մեղայականով, հրաժարվել, որ ինքը չի ստորագրել դիմումները:

Պատասխանողը հայտնել է, որ 2017թ. օգոստոսի 28-ին Դիմողի և իր միջև կնքվել է պայմանագիր և իր կողմից գործին ընթացք տրվել միայն, երբ դիմումատուն

ամբողջությամբ իր ծառայության վճարը՝ 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամը, վճարել է: Ինքը կատարել է հարցումներ կադաստրին, որի համար ինքը կատարել է վճարումներ՝ կադաստրային գործի պատճենների և տեղեկատվության ստացման համար, հարցումներ արխիվային բաժնին, որի համար վճարվել է 5000 ՀՀ դրամի տուրք, պետական տուրքի վճարումները երկու հայցապահանջի համար:

Պատասխանողը հայտնել է նաև, որ այդ գործի գբաղվածության ընթացքում 2018 թվականի հունվարին իր հայրը մահացել է և ի պատիվ իրեն դատավորները, ըմբռնումով մոտենալով շարունակ հետաձգում էին իր մասնակցությամբ դատաքննությունները, մինչև որ պարզվեց որ ինքը եղել է խորը դեպրեսիայի մեջ և որ ինքը աշխատանքի է անցել մայիս ամսի վերջերից և դիմումատուն քաջատեղյակ է եղել իր այս իրավիճակից:

Պատասխանողը հայտնել է նաև, որ Դիմողի բնակելի տան սեփականության իրավունքի վկայականի բնօրինակը եղել է իր մոտ, և երբ ինքը հունիսին արդեն աշխատել է զանգահարել է Դիմողին և ասել, որ գա իր վկայականը վերցնի, և Դիմողը նշել է, որ երբ հարմարացնի կգնա կվերցնի, իսկ երբ ոստիկանությունից են գանգել ինքը Պատասխանողին զանգել և կանչել է՝ վերադարձնելով վկայականը և առաջարկելով, որ իր կատարած աշխատանքների գումարը հանած, մնացած գումարը հետ վերցնի, սակայն վերջինս հրաժարվել է գումարից՝ երդվելով, որ ինքը չի գրել դիմում:

Պատասխանողը նշել է, որ Դիմողի գործը, ըստ իրենց պայմանագրի՝ հայցադիմում կազմելն է եղել, որն էլ իր կողմից պատրաստ է: Վերջինս նշել է նաև, որ արդեն մոտ երկու տարի է իրենց դատարանի դատավորին տեղափոխել էին և իրենց մոտի դատական գործերը լսում էին իրենց մարզի տարբեր քաղաքների դատավորներ, Նորիկ Խանվելյանը նաև տեղեկացել էր, որ իրենց մոտ նոր դատավոր են նշանակում և խնդրել, որ սպասի որ իրենց քաղաքի դատավորը լսի որպեսզի ինչպես ինքն էր ասում՝ «էս տարիքին ճանապարհներն չընկնեն»: Պատասխանողը Խորհրդի նիստին չի ներկայացել թեև պատշաճ ծանուցված է եղել Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին: Պատասխանողը ներկայացրել է կազմված հայցադիմումի պատճենը և 22.11.2018թ. կազմված արձանագրության պատճենը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

29.11.2018թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Գոհար Հովհաննիսյանը կազմել է եզրակացություն: Նախապատրաստողը եզրակացրել է, որ փաստաբան Գրետա Ռամազյանի և Նորիկ Խանվելյանի միջև 28.07.2016թ. փաստաբանական ծառայությունների մատուցման համար պայմանագիր է կնքվել և պայմանագրով Պատասխանողը (կատարողը) պարտավորվել է կազմել փաստաթղթեր, տալ իրավաբանական խորհրդատվություն, կազմել հայցադիմում և պատվիրատուի հանձնարարությամբ մասնակցել դատաքննություններին դատարաններում, որի համար ըստ պայմանագրի վճարվել է 80.000 ՀՀ դրամ գումար: Կողմերն իրենց բացատրությունների հետ չեն ներկայացրել վճարումն հավաստող փաստաթուղթ կամ չեն հայտնել, թե ինչ եղանակով և ինչ չափով է եղել վճարումը, թեև

Պատասխանողը ընդունել է պայմանագրով ստանձած վճարը վճարված լինելու փաստը: Նախապատրաստողը նշել է, որ datalex.am կայքում առկա չէ Նորիկ Խանվելյանի կամ նրա ներկայացուցչի կողմից ներկայացրած դատական գործ, ինչպես նաև Պատասխանող կողմը չի ներկայացրել իր կողմից աշխատանքներ կատարած լինելու վերաբերյալ որևէ փաստաթղթի պատճեն:

30.11.2018թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2019 թվականի փետրվարի 06-ին, ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Դիմողի և փաստաբան Գրետա Ռամազյանի միջև 28. 07. 2016 թվականին կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր:

2. Պայմանագրի առարկան կազմել է՝ փաստաթղթերի կազմումը, իրավաբանական խորհրդատվությունը և հայցադիմումի կազմումը:

3. Պայմանագրի գինը սահմանված է եղել՝ 80. 000 ՀՀ դրամ:

4. Դիմողը փաստաբանի ծառայությունների համար կատարել է վճարում:

5. Պատասխանողի կողմից հայցադիմում չի ներկայացվել դատարանին:

Նշված փաստերը հաստատվում են 28. 07. 2016թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Գրետա Ռամազյանը (արտոնագիր 370, ստացված՝ 16.03.1999թ.) նկատմամբ 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (1 ավարտված վարույթ):

Խորհրդի 06.10.2016 թվականի թիվ ԿԳ/118-Ա որոշմամբ անդամավճարի վճարման պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճվել՝ արտոնություն կիրառելու հիմքով:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գրեգոր Ռամազյանը ենթակա է պարտասխանարվության Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 կետերի խախտման համար, իսկ Կանոնագրքին 3.1.8 ենթակետի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պարճառաբանությամբ.

7.1 Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման մասով.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապարասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Վերլուծելով նշված կանոնները Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ: Համադրելով նշված կանոնները Պալատի խորհուրդը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին, պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխղճության ապացույց: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ Պատասխանողի և Դիմողի միջև 28.07.2016 թվականին կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի առարկան կազմել է՝

փաստաթղթերի կազմումը, իրավաբանական խորհրդատվությունը և հայցադիմումի կազմումը:

Խորհուրդը հատկանշական է համարում այն հանգամանքը, որ Պատասխանողի կողմից պայմանագրի կնքումից՝ 28.07.2016 թվականին մինչ օրս դատարան հայցադիմում չի ներկայացվել, ինչը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, իսկ ինչ վերաբերում է Պատասխանողի կողմից ներկայացված հայցադիմումին, ապա վերջինում բացակայում է ամսաթիվ, իսկ կից ներկայացված արձանագրությունից պարզ է դառնում, որ այն կազմվել է Պալատի նախագահի կողմից կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումից հետո:

Խորհուրդը արձանագրում է, որ Պատասխանողը նշել է, որ կատարել է հարցումներ կադաստրին, որի համար կատարել է վճարումներ՝ կադաստրային գործի պատճենների և տեղեկատվության ստացման համար, հարցումներ արխիվային բաժնին, որի համար վճարվել է 5000 ՀՀ դրամի տուրք, պետական տուրքի վճարումները երկու հայցապահանջի համար, սակայն չի ներկայացրել որևէ հիմնավորող ապացույց նշվածի կապակցությամբ:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գրետա Ռամազյանը թույլ է տվել Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտում, ինչի համար փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
- 4) տուգանք (...):

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է կիրառել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ «Դեռնթոլագիա» թեմայով, 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:

7.2 Կանոնագրքի 3.1.8 ենթակետի խախտման մասով.

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության

կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Սույն կանոնի էությունը կայանում է նրանում, որ փաստաբանը, չպետք է ընդունի իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննության ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով կհաստատվեր Պատասխանողի կողմից Կանոնագրքի 3.1.8 ենթակետի խախտում թույլ տալու հանգամանքը:

Ուստի, Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի 3.1.8 ենթակետի խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 3-րդ մասի Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Գրեգոր Ռամազյանին (արտոնագիր՝ 255) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման համար:

2. Փաստաբան Գրեգոր Ռամազյանի (արտոնագիր՝ 255) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեռնթոլոգիա թեմայով, 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Փաստաբան Գրեգոր Ռամազյանի (արտոնագիր՝ 255) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.1.8 ենթակետի մասով՝ կարճել:

4. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

«Վ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Սիմոն Բաբայան

**06 փետրվարի 2019թ.
թիվ ԿԳ/01-Ա
ք. Երևան**